

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2015թ. սեպտեմբերի 2-3-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Կլիմայի փոփոխությունը բնութագրող վիճակագրական ցուցանիշների սահմանման, համապատասխան տեղեկատվական բազաների ձևավորման, տվյալների օգտագործման հարցերին նվիրված համաժողովին,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 7-8-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Բնապահպանական մշտադիտարկման և տեղեկատվության հարցերով աշխատանքային խմբի 17-րդ նստաշրջանին,
- ✓ 2015 թ. սեպտեմբերի 12-16-ը ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Թեհրանում (Իրանի Իսլամական Հանրապետություն) կայացած «Պաշտոնական վիճակագրության արտադրության գործընթացում վարչական տվյալների կիրառման կատարելագործում» թեմայով տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 14-25-ը ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Վճարային հաշվեկշռի վիճակագրության կազմման գործնական հարցեր» թեմայով դասընթացին,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 15-16-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած «ԱՊՀ երիտասարդությունը. վիճակագրական պատկեր» և «Գենդերային վիճակագրության զարգացումը» վիճակագրական ժողովածուների թողարկումների վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 15-18-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյումջյանը մասնակցել է ք. Ստամբուլում (Թուրքիա) կայացած «Կենսական վիճակագրական համակարգի սկզբունքների և առաջարկությունների կիրառությունն Ասիայում Քաղաքացիական գրանցումների և կենսական վիճակագրության (ՔԳԿՎ) գործողությունների տարածաշրջանային ծրագրի իրականացման շրջանակում» խորագրով ենթա-տարածաշրջանային աշխատաժողովին,

- ✓ 2015թ. սեպտեմբերի 21-23-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած Բիզնես ռեգիստրների փորձագետների խմբի հանդիպմանը,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Մարդահամարների և կացարանների համատարած հաշվառման փորձագետների խմբի աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 5-6-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել են ք. Օսլոյում (Նորվեգիա) կայացած Որակի կառավարման գծով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 5-6-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ջ. Ավոյանը և առաջին կարգի մասնագետ Ս. Զեյնալյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Աշխատանքի շուկայի վիճակագրություն» ծրագրի շրջանակում կազմակերպված «Տնտեսական ինտեգրումը և մոտարկումը ԵՄ քաղաքականությանը» խորագրով խորհրդակցությանը,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 11-14-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ տեղեկանվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և տեղեկանվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել են ք. Ուստ-Կամենոգորսկում (Ղազախստանի Հանրապետություն) կայացած «ԱրմենիաԻնֆո» տեղեկատվական համակարգի ներդրման Հայաստանի փորձը ներկայացնելու և արևելյան Ղազախստանի մարզի համար ԴեվԻնֆո տեղեկատվական համակարգի մշակման ու ներդրման ուղղությամբ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար հանդիպմանը,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 13-15-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել են ք. Դուշանբեում (Տաջիկստանի Հանրապետություն) կայացած «Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն» խորագրով խորհրդակցությանը, նաև Ս. Մնացականյանը մասնակցել է ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 54-րդ նիստին,

- ✓ 2015թ. հոկտեմբերի 14-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Բնապահպանական տնտեսական հաշիվների համակարգի (ԲՏՀՀ) կազմմանը նվիրված սեմինարին,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 20-22-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած «Բնապահպանական տնտեսական հաշիվների հաշվառման կենտրոնական հիմունքներ և էներգետիկ հաշիվներ» խորագրով ուսումնական դասընթացին,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 20-22-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Նովոսիբիրսկում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Ռուսաստանյան վիճակագրական առաջին բաց կոնգրեսին,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 21-22-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը: